

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի

13.12.2022 թ. կայացած թիվ 10.22-23 նիստի

Ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից ներկա էին 28 –ը:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

### **Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

1. Ֆիզիկայի ֆակուլտետի հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
2. Միջուկային ֆիզիկայի ամբիոնի հայցորդ Գևորգ Վարդանի Մարտիրոսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատում:

**ԼՍԵՑԻՆ՝** Տեսական ֆիզիկայի ամբիոնի հեռակա ուսուցման չորրորդ տարվա ասպիրանտ Հռիփսիմե Կարենի Տերյանի հաշվետվությունը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց Հռիփսիմեի աշխատանքը գնահատող ամբիոնի քաղվածքը, նշելով, որ Հ. Տերյանը հաշվետու ժամանակաշրջանում հանձնել է անհրաժեշտ քննությունները, իր համահեղինակությամբ տպագրվել է մեկ հոդված:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաշվի առնելով ասպիրանտի կատարած աշխատանքը, ատեստավորել Հռիփսիմե Կարենի Տերյանին:

**ԼՍԵՑԻՆ՝** Միջուկային ֆիզիկայի ամբիոնի հայցորդ Ավետիս Հովսեփյանի հաշվետվությունը:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** Միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ա. Բալաբեկյանը: Նա նշեց, որ Ա. Հովսեփյանը հաշվետու ժամանակաշրջանում հանձնել է անհրաժեշտ քննությունները, Հովսեփյանի համահեղինակությամբ տպագրվել է 2 հոդված:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաշվի առնելով հայցորդի կատարած աշխատանքը, ատեստավորել Ավետիս Հովսեփյանին:

**ԼՍԵՑԻՆ՝** Միջուկային ֆիզիկայի ամբիոնի հայցորդ Գևորգ Վարդանի Մարտիրոսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԵԼՈՒՅԹ ՌԻՆԵՑԱՎ՝** Միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ա. Բալաբեկյանը: Նա ներկայացրեց հայցորդի թեզի թեման և դրա արդիականությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հատատել Միջուկային ֆիզիկայի ամբիոնի հայցորդ Գրորգ Վարդանի Մարտիրոսյանի՝ «Անագի հարստացված թիրախներում ցածր էներգիաներով պրոտոնների փոխազդեցությունների ուսումնասիրություն» վերստառությամբ թեկնածուական ատենախոսության թեման:

2. Ատենախոսության թեմայի գիտական ղեկավար նշանակել ֆ.մ.գ.դ. պրոֆեսոր Անահիտ Բալաբեկյանին:

Ֆիզիկայի ֆակուլտետի  
Գիտական խորհրդի նախագահ՝

Ռ. Ս. Հակոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Գ. Հովհաննիսյան